

«Հաստատում եմ»

ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի

պրոբլեմների ինստիտուտի

տնօրեն, կ.գ.թ. Խ. Ապրապետյան

«17» հունիսի 2024 թ.



ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

Հայկ Հարազատի Մարտիրոսյանի «Լուլիկի նոր ողկուգավոր հիբրիդների աճի և զարգացման առանձնահատկությունները Հայաստանի ջերմատներում մշակության դեպքում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Զ.01.02 - «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն» մասնագիտությամբ գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ջերմատնային տնտեսությունների ակտիվ զարգացումը և կատարելագործումը Հայաստանի Հանրապետությունում կարող է ոչ միայն ապահովել մշակաբույսերի բարձր արտադրողականություն, այլև հնարավորություն ընձեռել միջազգային շուկայում մրցունակ արտադրանքի ստացմանը, որն էլ իր հերթին կխթանի արտահանվող արտադրանքի քանակության մեծացմանը: Պաշտպանված գրունտում արտադրության մեջ մեծ գիտական հետաքրքրություն է ներկայացնում, հատկապես, մշակաբույսերի բարձրարժեք հիբրիդների և սորտերի ներդրումը:

Ատենախոսի կողմից ներկայացված աշխատանքի նպատակն է եղել հետազոտել ողկուգավոր լուլիկի հիբրիդների (տեղական և ներմուծված) ազրոկենսաբանական յուրահատկությունները, ինչպես նաև դրանց մշակման տնտեսական արդյունավետությունը՝ Հայաստանի Հանրապետության թաղանթապատ հիդրոպոնիկ և գրունտային ջերմատներում դրանք արտադրության մեջ ներդնելու նպատակով:

Գիտական նորույթը

Հայկ Մարտիրոսյանի կողմից առաջին անգամ Հայաստանի Հանրապետության թաղանթապատ հիդրոպոնիկ և գրունտային ջերմատնային պայմաններում ուսումնասիրվել են ողկուզավոր լուլիկի, ինչպես տեղական, այնպես էլ ներմուծված հիբրիդների ագրոկենսաբանական առանձնահատկությունները, գնահատվել է հիբրիդների դիմացկունությունը տարբեր սնկային և բակտերիալ հիվանդությունների նկատմամբ, հաշվարկվել է դրանց աճեցման տնտեսական արդյունավետությունը:

Գործնական նշանակությունը

Ատենախոսի կողմից իրականացված աշխատանքն ունի կարևոր գործնական նշանակություն: Այն առաջարկում է Հայաստանի Հանրապետության թաղանթապատ հիդրոպոնիկ և գրունտային ջերմատներում մշակության համար լուլիկի ողկուզավոր տարբեր հիբրիդներ՝ կախված շրջապատույտից:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Հայկ Մարտիրոսյանի ատենախոսական աշխատանքը շարադրված է 110 համակարգչային էջի վրա և բաղկացած է ներածությունից, 6 գլուխներից, ընդհանուր եզրակացություններից, արտադրությանը առաջարկություններից, գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

«Ներածություն» բաժնում ներկայացված է իրականացված աշխատանքի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ինչպես նաև գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Այս բաժնում ատենախոսը ներկայացրել է նաև

տեղեկատվություն աշխատանքի կառուցվածքի, ծավալի, հրապարակումների և դրա ապրոքացիայի վերաբերյալ:

Առաջին գլխում ներկայացված են լուրիկի բուսաբանական նկարագիրը, ջերմատնային լուրիկի կենսաբանական առանձնահատկությունները, այդ թվում՝ պտուղների կենսաքիմիական կազմը: Այս գլխում ատենախոսն անդրադարձել է նաև բույսերի աճեցման հիդրոպոնիկ եղանակին:

Երկրորդ գլխում ներկայացված են կատարված հետազոտությունների պայմանները, ինչպես նաև ուսումնասիրություններում և վիճակագրական վերլուծության համար կիրառված մեթոդները:

Երրորդ գլխում ներկայացված է լուրիկի փորձարկված հիբրիդների նկարագիրը, տրված է տարբեր շրջապտույտներում սնկային և բակտերիալ հիվանդությունների նկատմամբ հիբրիդների ֆիտոպաթոլոգիական գնահատականը, ինչպես նաև ֆենոլոգիական փուլերի անցման տևողությունը՝ կախված հիբրիդից և շրջապտույտից:

Չորրորդ գլխում ներկայացված են հիբրիդներից և մշակության շրջապտույտից կախված լուրիկի բերքատվության ցուցանիշները, տրված է պտուղների որակական գնահատական:

Հինգերորդ գլխում ներկայացված է լուրիկի հետազոտված հիբրիդների աճեցման տնտեսական արդյունավետությունը:

Վեցերորդ գլխում ներկայացված են հիդրոպոնիկ թաղանթապատ ջերմատանը իրականացված արտադրական փորձարկումների արդյունքները:

«Ընդհանուր եզրակացություններ» բաժնում ատենախոսը թվարկել է գիտական հետազոտությունների արդյունքում կատարված եզրակացությունները:

«Առաջարկություններ արտադրությանը» բաժնում ատենախոսը թվարկել է առաջարկություններ Հայաստանի Հանրապետության գրունտային և թաղանթապատ հիդրոպոնիկ ջերմատան պայմաններում լուրիկի աճեցման արդյունավետության, ինչպես նաև արտահանման քանակների բարձրացման ուղղությամբ:

«Գրականության ցանկ» բաժնում ներկայացված է 142 անուն գրականություն:

«Հավելված» բաժնում ատենախոսը ներկայացրել է լուրիկի ողկուզավոր հիբրիդների լուսանկարներ փորձարարական միջավայրից:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

- Աշխատանքում առկա են որոշ տեխնիկական բացթողումներ, ուղղագրական սխալներ,
- ցանկալի կլիներ ատենախոսի կողմից ներկայացվել նաև հիդրոպոնիկ բույսերի պտուղների որակական վերլուծության տվյալներ, ինչը կարող էր հարստացնել աշխատանքը,
- որոշ գծագրերում և աղյուսակներում բացակայում են ստանդարտ շեղումները,
- էջ 46-ում և էջ 49-ում ներկայացված աղյուսակները կրկնվում են,
- գծապատկերներ 4.7-ը և 4.8-ը պետք է ներկայացվել սյունակների տեսքով,
- գրականության ցանկը ձևավորված չէ նույն ոճով,
- տեքստում առկա են հղումներ, որոնք բացակայում են գրականության ցանկից:

Եզրակացություն

Ատենախոսության թեմայով ատենախոսի կողմից տպագրվել է 3 գիտական հոդված: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Հաշվի առնելով վերը նշվածը, կարելի է եզրակացնել, որ Հայկ Հարազատի Մարտիրոսյանի «Լուլիկի նոր ողկուզավոր հիբրիդների աճի և զարգացման առանձնահատկությունները Հայաստանի ջերմատներում մշակության դեպքում» թեմայով թեկնածուական ատենախոսական աշխատանքը ավարտուն գիտագործնական աշխատանք է: Այն բավարարում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետով թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Զ.01.02 - «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն»

մասնագիտությամբ գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի գիտխորհրդի նիստում (արձանագրություն թիվ 5, 17 հուլիսի 2024 թ.):

ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի գիտական խորհրդի նիստին (արձանագրություն թիվ 5, 17 հուլիսի 2024 թ.) մասնակցել են

Ա.Ա.	Գիտական աստիճան
Թադևոսյան Աննա	կենսաբանական գիտությունների թեկնածու
Կարապետյան Աստղիկ	կենսաբանական գիտությունների թեկնածու
Ղալաչյան Լատիրա	գյուղատնտեսական գիտությունների թեկնածու
Հովհաննիսյան Լյուսյա	գյուղատնտեսական գիտությունների թեկնածու
Միսեոյան Ռուբեն	գյուղատնտեսական գիտությունների թեկնածու
Վարդանյան Անուշ	կենսաբանական գիտությունների թեկնածու
Հակոբջանյան Անահիտ	կենսաբանական գիտությունների թեկնածու
Դարյադար Մահսա	կենսաբանական գիտությունների թեկնածու

Նիստի նախագահ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, գ.գ.դ.,

Բույսերի սննդառության և արդյունավետության

լաբորատորիայի վարիչ

Նիստի քարտուղար, գիտքարտուղար

ավագ գիտաշխատող, կ.գ.թ.



Ա.Խ. Մայրապետյան

Ա.Ս. Կարապետյան